



ΣΧΟΛΙΚΗ ΧΡΟΝΙΑ 2026-2027
ΠΛΑΙΣΙΟ ΜΑΘΗΣΗΣ ΚΑΙ ΠΡΟΓΡΑΜΜΑΤΙΣΜΟΣ
ΑΡΜΕΝΙΚΑ Α΄ ΛΥΚΕΙΟΥ
Α΄ ΤΕΤΡΑΜΗΝΟ

ՀԱՅԵՐԵՆ

ΣΤΟΙΧΕΙΑ ΜΑΘΗΜΑΤΟΣ – ΠΛΑΙΣΙΑ

**ΕΒΔΟΜΑΔΙΑΙΕΣ
ΠΕΡΙΟΔΟΙ
ΔΙΔΑΣΚΑΛΙΑΣ:**
3

ΕΞΕΤΑΖΟΜΕΝΟ

Διδακτικά εγχειρίδια-Βιβλιογραφία:

ՄԵՐ ԼԵՉՈՒՆ 9

Հայ Լեզու եւ Գրականութիւն

Հեղինակներ՝ Յարութիւն Զիւրաբեան Մարո Գալայճեան-Զիւրաբեան

ԲԱՌԱՐԱՆ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ ՀԱՅԵՐԵՆ ԼԵՉՈՒԻ

Հեղինակ՝ Անդրանիկ Վրդ. Կռանեան

Υλικά και μέσα που θα χρησιμοποιήσουν οι μαθητές κατά τη διδασκαλία του μαθήματος:

Նշուած թեմաներով յաւելեալ նիւթեր ըստ պահանջի, նաեւ վարժութիւններ (բառագիտութիւն, բառակազմութիւն, բայ, մակբայ) պիտի տրուին աշակերտներուն համացանցէն, ինչպէս նաեւ ուսուցիչին կողմէ պատրաստուած: Յաւելեալ թեմաներ կարելի է աւելցնել ըստ ուսուցիչի հայեցողութեան, նկատի ունենալով աշակերտներուն պահանջը եւ հետաքրքրութիւնները: Դասաւանդութեանց ընթացքին կ'ըլլայ արուեստագիտութեան օգտագործում:

ΓΕΝΙΚΟΣ ΣΚΟΠΟΣ (ΓΕΝΙΚΟΣ ΔΕΙΚΤΗΣ ΕΠΙΤΥΧΙΑΣ)

Հայերէն լեզուի այս մակարդակի ուսուցումով աշակերտները պիտի ստանան անհրաժեշտ իմացութիւնը՝ զարգացնելու իրենց բերանացի եւ գրաւոր հաղորդակցութիւնը: Միաժամանակ պիտի սորվին օգտագործել լեզուն ստեղծագործական կերպով: Հայերէն լեզուի ուսուցման ընդմէջէն աշակերտները պիտի ծանօթանան հայ մշակոյթին: Տարբեր բնոյթի աշխատանքներով անոնք պիտի զարգացնեն իրենց անձնական կարողութիւնները եւ մտահորիզոնը: Հայերէնի դասընթացքը միտում ունի զարգացնել աշակերտներու հմտութիւնները, ստեղծագործական կարողութիւնները, քննադատական մտածողութիւնը, ինքնազարգացման ձգտումը եւ կարողութիւնը, 21րդ դարու համապատասխան՝ ըլլալու գործօն քաղաքացիներ:

ΑΝΑΜΕΝΟΜΕΝΑ ΜΑΘΗΣΙΑΚΑ ΑΠΟΤΕΛΕΣΜΑΤΑ (ΔΕΙΚΤΕΣ ΕΠΑΡΚΕΙΑΣ)

Աշակերտները պիտի կարենան

- հասկնալ տարբեր տեսակի գրութիւններ / նշուած մակարդակով / եւ պատասխանել հարցումներու բերանացի թէ գրաւոր կերպով:
- իրենց անցած թեմաներով սորված նոր բառերը օգտագործել նախադասութիւններու եւ պարբերութիւններու մէջ:
- արձանագրել ստացած տեղեկութիւնները նիւթի մը շուրջ:
- կազմակերպել իրենց խօսքը հատուածի, պարբերութեան, նախադասութեան եւ բառի մակարդակով:
- տալ իրենց անձնական կարծիքը կարդացած նիւթերու շուրջ:
- արտայայտուիլ իրենց սորված արժեքներու ու սկզբունքներու մասին:
- մասնակցիլ նիւթի մը վերլուծութեան:

Οι μαθητές με την ολοκλήρωση του μαθήματος θα πρέπει να είναι σε θέση να

Աշակերտները պիտի կարենան

- ներկայացնել իրենց անձը ինչպէս նաեւ տարբեր նկարագիրներ:
- հասկնալ ուրիշին մանկութեան յիշատակները եւ ներկայացնել իրենց մանկութենէն յիշատակներ:
- խօսիլ եւ գրել միջավայրի մը մասին:
- արտայայտուիլ դպրոցի դերի մասին:
- տալ իրենց կարծիքը ուսուցիչի դերի մասին:
- բացատրել աշակերտին եւ դպրոցին իրենց պատկերացումը:
- քննարկել՝ արհեստագիտութիւն եւ մարդիկ այսօր թեմայով:
- անդրադառնալ մարդկային արժեքներու, սկզբունքներու եւ մտածելակերպերու:
- մատնանշել ընկերային տարբեր երեւոյթներ եւ ձեւեր:

ΔΕΙΚΤΕΣ - ENOTHTES	
ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ Մանկութիւն Նկարագիրներ Յիշատակներ Միջավայր ԿՐԹՈՒԹԻՒՆ Դպրոցին դերը Ուսուցիչին դերը Աշակերտը եւ դպրոցը ԱՐՅԵՍՏԱԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՐԴ Առաւելութիւններ եւ անպատեհութիւններ Գիտական նուաճումներ Ժամանակակից հարցեր ԱՐԺԷՔՆԵՐ Մարդկային արժէքներ Աշխարհայեացքներ Սկզբունքներ Խաղաղութիւն	

ΑΞΙΟΛΟΓΗΣΗ	
------------	--

- | | |
|--|---|
| | <p>i. Աշակերտին մասնակցութիւնը դասարանին մէջ - Զետաքրքրութիւնը դասին հանդէպ եւ ամենօրեայ բերանացի մասնակցութիւնը, նախաձեռնութիւն ունենալը, գործակցութիւնը տարբեր աշխատանքներու, նաեւ ընդհանուր ներդրումը դասի ընթացքին</p> <p>ii. Տնային աշխատանք - Դասարանին մէջ բացատրուած նիւթի հիման վրայ հարցում-պատասխան, բառագիտութեան վարժութիւններ, լեզուական աշխատանքներ, շարադրութիւն, դասաւանդուած եւ նախապէս տեղեկացուած նիւթի վրայ գրաւոր ստուգում</p> <p>iii. Դասարանային գրաւոր աշխատանք - Դասաւանդուած նիւթի հիման վրայ հարցումներ, բառագիտութեան վարժութիւններ, լեզուական աշխատանքներ, շարադրութիւն, դասաւանդուած եւ նախապէս տեղեկացուած նիւթի հիման վրայ գրաւոր ստուգում</p> <p>iv. Ուսումնասիրական եւ ստեղծագործական աշխատանք - Անհատական կամ խմբային, տրուած նիւթի եւ առաջադրանքներու հիման վրայ</p> <p>v. Յաւելեալ կամաւոր աշխատանք - Դասանիւթին առնչուած սակայն դասէն անկախ կամաւոր մասնակցութիւն կամ աշխատանք հայերէնի հետ կապուած</p> |
|--|---|

[illegible]


